

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յաղագս եպիսկոպոսապետին Ներսեսի, թե որպիսի՛ այր էր, կամ զի՛նչ գործեր:

2 Այլ եպիսկոպոսապետն Յայոց Ներսես շիներ զամենայն ակերեալսն երկրին Յայոց. յանձն առներ եւ միսիթարեր, դարմաներ եւ տեսուչ լիներ ամենայն աղքատաց. եւ զաւրկունս եւ զաղքատս հանգուցաներ: 3 Եւ շիներ զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, եւ զամենայն կործանեալսն կանկներ. եւ զամենայն կարգսն տապալեալ ուղղէր եւ նորոգէր: 4 Շինէր եւ հաստատէր, իւրատէր եւ յանդիմանէր. բազում առներ նշանս եւ զաւրուօթիւս մեծամեծս եւ բազում բժշկութիւնս սքանչելեաց: 5 Եւ յաւրեւսն¹ սաստեր մեծապէս. եւ զոր արհներ՝ արհներ², եւ զոր անիծանէր՝ անիծեալ լինէին: 6 Եւ բազմացոյց զկարգս պաշտանեւից յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն Յայոց, եւ յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. եւ հանապազ զգուշանայր տեսչութեանն իւրոյ եւ իշխանութեան, որչափ եկաց նա ժամանակս:

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Յաղագս թագաւորին Պապայ, թե զհա՛րո՞ղ էր լի դիւաւք կամ ո՛րպէս վարէրն:

2 Այլ թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ՝ այն ինչ ծնեալ էր ի մաւրե իւրմէ՝ յայնժամ ծանեաց զնա դիւաց անաւրէն մայրն Փառանձեմ, եւ վասն այնորիկ լի էր դիւաւք ի տղայութենէ իւրմէ: 3 Վասն զի հանապազ զկամս դիւաց առներ, վասն այսորիկ եւ զբժշկութիւն իսկ ոչ կամէր³ գտանել. զի հանապազ վարէր⁴ զանձն իւր դիւաւք, եւ կախարդանաւք երեւէին դեւքն ի նմա. եւ ամենայն մարդ գդեւսն ի նմա աչաւք բացաւք տեսանէին: 4 Չի յորժամ մարդիկ հանապազաւր յայգորել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յաւձից կերպարանս ելանէին ի ծոցոյն Պապայ թագաւորին, եւ պատէին զուսաւք նորա. եւ ամենեքեան ոյթ տեսանէին զնա, երկնչէին ի նմանէ եւ հուպ երթալ: 5 Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով՝ թե մի՛ երկնչիք, զի սոքա իմ են. եւ ամենայն մարդ յամենայն ժամ տեսանէին զայսպիսի ինչ կերպարանս ի նմա:

6 Չի բազում համբարք դիւաց համբարեալ էին ի նմա. եւ յամենայն ժամ ամենայն մարդոյ երեւեր այս, որք զամ մի զթագաւորն տեսանէին. բայց յորժամ հայրապետն Ներսես մտանէր առաջի նորա կամ սուրբ եպիսկոպոսն Խադ, դեւքն չերեւեալ աներեւոյթ լինէին: 7 Եւ էր թագաւորն Պապ ի պղծութեան թաւալեալ. երբեմն այլոց եզ եղեալ, տայր զինքն ի խառնակութիւն. եւ

1 *Օրինակ մի՛* յանօրէնս

2 *Յամենայն օրինակս՝* եւ զոր օրհներ եւ զոր անիծանէր

3 *Օրինակ մի՛* կարէր

4 *Յօր.* վարժէր